Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մէճիտ կանխիկ վճարելի, թէ մայրաքաղաքին եւ իւր արուարձանաց եւ թէ գաւառաց համար :

վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ ընդունուի :

Տեղական եւ գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

Հատը 40 փարայ է, եւ կգտնուի մասնաւորապէս Պահճէ-Գափու ջրավաճառ. եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութները :

ՓՈՒՇ

Ծանուցման տողը 3 դրուշ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամնեբու համար :

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալատճատեան ի. Պօլիս Պալըգ-բազար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Armenien Pountch
—16 Nafié-Han . Balouk-Pazar 16—
Constantinople

Թիւ 1998 Շ Ա Բ Ա Թ 1886 ՅՈՒՆԻՍ 14

ԱԶԳԱՅԻՆ

Ա– Մէրճէ Ազէօյիւ Բուտաէյ : – Պօթուշանէ լուր կը տրուի մեզ թէ այս օրերս գաղղիական քաղաքէն մը նամակներ գրուած են Բուսանիոյ զանազան կողմերը բնակեալ ազգայնոց, որոնք յորդոր կը կարդան առատ դրամ հանգանակել բարձրագոյն նպատակի մը համար : Պարտ կը համարիմք մեզ ծանուցանել թէ այդ նամակները գրողն և նորա խորհրդակիցք ուդործակիցք կատարեալ խաբեբաներ են, բաղդախնդիրներ են, և խաբէութեամբ ու ստութեամբ դրամ կորզել կուզեն : Պարտ կը համարիմք զգուշացընել այդպիսի չարաշուք անձերէ : Բուսանիացի՛ք, բնաւ հաւատ մ՚ընծայէ՛ք . բնաւ կարևորութիւն մի՛ տայք այդպիսի անձանց դրածներուն : Այո՛, պէտք է դրամ հանգանակել, ընկերութիւններ կազմել և աշխատիլ, բայց ազգային վարժարանա՛ց բարեկարգութեան համար, ազգային երկսեռ մանկուո՛ց կրթութեան ու դաստիարակութեան համար, ազգային եկեղեցե՛ց պայծառութեան համար, արժանաւոր աղքատաց ու կարօտեալ՛ց օժանդակութեան ու միխիթարութեան համար : Հանգանակութիւնք անհրաժեշտ են այսպիսի կարևորագոյն պիտոյից համար . առաւել քան ցայսօսիկ կարևորագոյն և բարձրագոյն նպատակ չկայ աշխարհի ամէն կողմը բնակեալ Հայոց համար, և ահա բացարձակ կըսեմք թէ ուրիշ նպատակաց համար դրամ պահանջողները վատ ու սրիկայ խաբեբաներ են : Մի՛ հաւատայք, բուսանիացի՛ք, ֆօքչանցի՛ք, պօթուշանցի՛ք . գիտեմք մեք թէ ո՛յք են որ ի խաբէութիւն եղած են, բայց կը լռեմք առ խոհեմութեան. Բուսանիացի՛ք, բնիսն մ՚անգամ մի՛ տայք՝ գաղղիական քաղաքէն գրուած նամակին հաւատալով . ազգին ջնասոյին ապրիլ պարարիլ ուզող անխիղճ և վատաբարոյ անձինք են նոքա . հաճոյատեսիլ խնճորներ առաջի միամտաց դնորելով՝ չանահնար կը լինին հրապուրել, և սուրբ քրտանց ու երկանց արգասիք եղող դրամներ յափշտակելով առա՛ծ առատ վայելելյան. դորրոս : Զգուշացէ՛ք այսպիսի խաւարասէր անձերէ, և փոյթ ու խնամ տարէք ձեր անհատական՝ ընտանեկան ու ազգային յառաջադիմութեան ու զարգացման համար : Այսպէս միայն կը վերաշինէք, կը վերականգնէք կը փառաւորէք Հայկական տունն, որոյ բոլոր ջնասուց պատճառ են՝ այժմ յանուն բարձրագոյն նպատակաց ձենէ դրամ կորզելու եկող անձանց նման բանսարկու, խաբեբայ և չահադէտ չազգայինք :

Պօթուշանցիք, և այլ ամենայն ազգայինք մեր որ բնակեալ են ի Բուսանիա, կը հրաւիրուին ուշի ուշով վերծանել մեր այս բարեացակամ տողերն, և ըստ այնմ վարուիլ : Խաբէութեան չարագոյն ժամանակի մէջ կապրիմք : Պարտ ու պէտք է արթուն ու աչալուրջ գտնուիլ ըստ ամենայնի :

(Թղթակցութիւն Փուճջի)

Նը–Զոռլը (Ատպահան) 23 Մայիս 1886 : – Կանխահաս ժամանեցաւ աստ Յարութիւն Բէգ, պաշտօնատարն ռուսական դեսպանատան Թէհրանայ, բերելով ընդ իւր ղկայսերական պարգևսն ղորմէ յիշեցաք նախընթաց նամակաւ մեզմով : Յինիերորդում Մայիսի Ն. Տ. (Աչխարհամատրան կիւրակէ) եհաս աւետաբերն աստ, և ղկնի երկուց աւուրց (յաւուրն երէքշաբաթի) հանդէս նշանակրութեան Նորին Բ. Սրբազնութեան տեղի կալաւ, այնպիսի խիմն փառաւոր շքեղութեամբ, ղոր ականատես Հայկազունք ընդ երկար՝ պարծանո՛ք յիշեսցեն : Յերրորդ ժամուն յետ միջօրէի սկիզբն եղև մեծի տնտախմբութեանն, և ի չորից կողմանց Ջուղայու՝ Հայք և Հայուհիք, ծերք և դեռափթիթք աճապարէին առ Թաղն Երևան : Ի հնչել զանգականաց Սրբոյ Ամենափրկչեան եկեղեցւոյ (կոչեցեալ և Սուրբ Սարգիս) Երևան Թաղի, դաս դաս ժողովրդականաց վայելչապէս զգեստաւորեալ, ուղղեցին զճանապարհս իւրեանց առ յիշեալ եկեղեցին, ուր տեղի առնելոց էր հանդէս նշանաղարդութեան : Եկեղեցին Սրբոյ Ամենափրկչեան, թէպէտ մի ի լայնածաւալ և յընդարձակ եկեղեցեաց Նոր–Ջուղայու, այլ և այնպէս չբաւականանայր բովանդակել զխուռն բազմութիւն հոգևորականաց, ժողովրդականաց յերկուց սեռից և այլազգեաց, ուստի շատք պարտաւորեցան յարտաքուստ դիտել զհանդէսն : Իբրև մի քառորդ անց ի չորս ժամէն, Նորին Բ. Սրբազնութիւն Տէր Գրիգորիս, ընկերակալ յԱրժանապատիւ Աւագերէցէն և այլ քահանայից, ի պատուելի մերազանց և ի պարսիկ մեծամեծաց, և յառաջընթացեալ յարքայական գաւազանակրաց Զէլ–էլ–Սօլթան կուսակալին, անցանելով ընդ մէջ թանձր բազմութեան որք չուրջ զդրամբն կային, մուտ արար ի Սուրբ եկեղեցին և երկիրպագանելով Սրբոյ Տաճարին, բազմեցաւ ի վերայ յիւրում սեպհականեալ աթոռոյն : Դալատեամբ Նորին Բ. Սրբազնութեան՝ և առաւել թանձրացաւ խումբ հանդիսականացն, մինչ անգամ գնալ ումանց առ վերնայարկն եկեղեցւոյն և անտի յագեցուցանել զաչս իւրեանց անցիւքն՝ որք ի վայր տեղի առնէին : Մինչդեռ ձեղունն և առաստաղ Սրբոյ եկեղեցւոյն մեղմով մեղմով զարձագանս սակաւ ինչ մեծաբարբառ չընկմանց՝ խրախճիտ ժողովրդականացն արձակեր, այլք ի մերազանց յառաջանային առ կամուրջն Մարնուենայ կամ Շաֆրազեան (*) որ չէ հեռու յերևան Թաղէն : Ի վերայ կամրջին տեսանելի լինէին « Ֆըրաչք » կամ ծառայք ոստիկանութեան և ընդ նոսին և նորահարզ կամաւոր Հայ հեծելազօրք վսեմ: Կուսակալին Ասպահանայ, զորս բարեչնորհ Արքայորդին առաքեալ էր ի պատիւ նշանակրութեան Նորին Բ. Սրբազնութեան : Զկնի փոքրու միացաւ ընդ սոսա և խումբ մի փոքրիկ որ ի վանէն Սրբոյ Ամենափրկչեան եկն, ունելով ի միջի իւր ղկայսերական պարգևաբերն Յարութիւն Բէգ : Ի մերձենալն կամրջախմբին առ Սուրբ եկեղեցին Ամենափրկչեան, ընդ առաջ ելեալ աւագերէց Տէր Մարտիրոս Տէր Յովակիմ Ասպետի (**) քահանայիւք հանդերձ, ստանայ ի ձեռաց Յարութիւն Բէգի ղկայսերական պարգևսն բազմացուցեալ ի վերայ բարձի, և յառաջ ընթացեալ յարքայական գաւազանակրաց մտանէ յեկեղեցին և զետեղէ զայն ի վերայ տախտակեայ սեղանոյ միոյ՝ որ ի ստորոտ բեմին եդեալ կայր : Ի կանգնին Սրբազան Տէր Գրիգորիսի յաթոռոյն և մերձանալն առ նշանն, առեալ Տէր Մարտիրոս աւագերէցէ զուսաբարբառ հրովարտակն կայսերական, մատոյց զայն առ Պարոն Վարդգէս Տէր Յակոբ աւագերէց Սուրհենեանց, Մօսկովաբնակ ռուսահպատակ Հայ նկարչին, (որ այժմ ի մէջ մեր գտանի) որ և զկնի յստակ և որիշ ընթերցանութեան, վերադարձոյց զայն առ Տէր Մարտիրոս աւագերէց, և ապա ծերունազարդ քահանայն այս՝ բարձրաձայն և առոգանութեամբ ընթերցաւ ի լուր ամենայնի զյետագայ հայկական թարգմանութիւն կայսերական հրովարտակին :

«Ողորմութեամբն Աստուծոյ
Մեք կայսր և ինքնակալ ա-

(*) Շաֆրազ կամ չքեղաչուք իշխանն Հայոց Խոջայ Սարգիս, էր մի յերեւելի անդամոց Սարգիսեան տոհմականութեան, որք ի ժամանակս թագաւորութեան Շահաբաս երկրորդի՝ արքայից Պարսից, ծագկեցան եւ փարթամացան վաճառականութեամբ ի Նոր-Ջուղայ : Պատմի ի Խոջայ Սարգիսէ, զի սա յաւուրս ամարան՝ գնացեալ ընդ Շահաբասի ի գեան Ջէնդէրուտ, ի պատիւ մեծի չնորհաց ինքնակալին՝ այցելութեամբն առ իւր, զընթացս գետոյն յիշելոյ, ձերմակ Շահի դրամօք (1/8 դրան) խափանեալ էր եւ ապա բաշխեալ էր զայն գումար ծառայիցն որք ընդ արքայն : Այսու աղագաւ կամուրջն Մարնուենայ կոչի եւս մինչ ցայսօր « Շաֆրազեան կամուրջ » :

(**) Տէր Մարտիրոս Աւագերէց կրէ զերրորդ աստիճան Սրբոյ Աննա նշանին

մենայն ռուսաց, թագաւոր Լեհաց, մեծ իշխան Ֆինլանտացւոց և այլն և այլն .

«Առաջնորդի Իսպահանայ լուսաւորչական Հայոց Թեմի և տեսչի Հայոց եկեղեցական եկամտից ի Հնդկաստան, Արքեպիսկոպոսին Դրիգորիսի .

«Ի նշան առանձին մեր առ ձեզ չնորհի ամենաողորմածաբար դասեցաք զձեզ ի թիւս Ասպետաց մերոյ Սուրբ Աննայ նշանի առաջին աստիճանի, որոյ զնշանս ընդ այսմ առաքելով առ ի դնել ի վերայ ձեր և ի կրել ըստ կանոնի :

Մնամ առ ձեզ
Կայսերական ողորմածութեամբ
Մեր չնորհիւ
(Ձեռ.) Աղեքսանդր
Ի Ս. Պիթերսբուրգ
18 Փետրուարի 1886
Համար 111.
Նախարարապետ Նշանաց
(Ձեռ.) Վլորոնցով Դաշկով

Հուսկ ուրեմն Նորին Բ. Սրբազնութիւն դարձուցեալ զդէմս իւր առ Սուրբ Սեղանն՝ խաչակընքեալ զերեան և բազկատարած և բարձրաձայն բարբառով ասացեալ զայս բան Սաղմոսին .

« Տո՛ւր ղօրութիւն ծառայի « քոյ, կեցո՛ զորդի աղախնոյ և « արա՛ առ իս նշան բարութեան ». Եառ զնշանն Սրբոյն Աննայի և արկ զայն ընդ պարանոցաւն՝ զարդարելով նովաւ զանձն իւր : Ապա ի բեմն ի վեր ելանելով՝ երկիր երպագ Սուրբ Սեղանոյն և դառնալով առ հանդիսականն, ազդարար զբարեհաճութենէ Նորին Վեհափառութեան Օգոստափառ Ալէքսանդր Դ. Կայսերն Ռուսիոյ, պատուել զԱռաջնորդն Նոր–Ջուղայու Սրբոյ Աննայի առաջին աստիճանաւն, որով պատուանշանաւ, ասէր, յայտ առնել կամէր Օգոստափառն զսէր իւր առ Աղգն Հայոց, ուստի ստանալով զնշանն կայսերական չնորհաց, մաղթելոց էր վասն անընդհատ չարունակութեան նոյն օգոստափառ խնամածութեան : Զկնի ջերմ խոստովանութեանս զոր աստ համառօտաբար յիշեցաք, խուռն բազմութիւն հանդիսականաց՝ որ կոհականաց երերեր և տատաներ, հորդան տուեալ՝ չտապաւ և խաւրն չփոթութեամբ սկսաւ հոսել ի փողոցն, ուր և ըստ երևութին ոչ դոյր տեղի վասն նորաեկիցն : Սակայն և այնպէս տագնապս այս չէր երկարատև և մեղմով առ սակաւ սակաւ մարթ եղև կարգաւորել զընթաց հանդիսին, որ էր ըստ հետևեալ կարգի : Ընդառաջ ամենեցուն մեղմով տանէին երկու « եֆէ » նժոյգս, մին ոսկի և միւսն արծաթաթօք պճնաղարդեալ : Քաղցր ակնածութեամբս այս, Արքայազն քաղաքապետն Ասպահանայ՝ վերստին մեծարէր զՕգոստափառ Կայսեր և Թագաժառանգին ամենայն ռուսաց և պալատականաց նոցին : Յետ այնորիկ ցրուին հանդիսականքն, այլ մեծամանութիւնն ուղղէ զգնացս առ հոգևոր գահլիճ Առաջնորդարանին Սրբոյ Վանացն՝ կառուցեալ յերջանկայիշատակ Բ. Սրբազան Տէր Մովսէս Արքեպիսկոպոսէ՝ նախորդէն Սրբազան Տէր Գրիգորիսի : Աստ ընթեռնանի ի Յովսէփեան Ղարաճանէ, Պարսի-

ՏՈՒՐՍ ՅՈՒՐԻՆ

Ա.

1869ին, Լիսաբոնի դեսպանատան մը ընդունելութեան ներկայ էր նաեւ Ռուսիոյ դեսպանը՝ Պրինց-Վոլկոնսքի, որ ամուսնացած էր Մարիա Ռաեւսքիի հետ, որ Նապոլէոն Գ.-ի կայսրուհիին՝ Եւգենիի մտերիմ բարեկամուհին էր։ Պրինց-Վոլկոնսքի, որ ծանօթ էր իր կնոջ հետ Փարիզի արքունի շրջանակներուն, ներկայացուց Ռուսիոյ դեսպանը Լիսաբոնի մէջ Ֆրանսայի դեսպանին՝ Պրինց Տուրսին։

Պրինց Տուրսին, որ ամուսնացած էր Ռոթշիլտներու ընտանիքէն աղջկան մը հետ, ունէր ամենէն ազնուական արտաքին մը։ Ան ամենէն նրբին ձեւերով մարդն էր, որ կարելի է պատկերացնել

հրդեհը չորս օր տևեր է։ Բնակչաց բազում աւերակաց ներքև մնացեր են։

= Դաղղիոյ կառավարութիւնն այս օրերս միայն արքայական ու կայսերական տանց գլխաւոր իշխանաց արտաքսման խնդրով չըզբաղիր։ Կուզէ արձակել չատ մը պաշտօնեաներ, առարկելով թէ բարւոք ծառայած չեն հանրապետութեան, և երեսփոխանական վերջին ընտրութեանց ժամանակ միապետականաց ի նպաստ ընթացից մէջ գտնուած են։

= Բանատայի Վանքուվէը քաղաքն ամբողջովին այրեցաւեր եղաւ անցեալ շաբթու։ Վնասը՝ 1 միլիոն տոլար կը հաշուեն. 18–20 մարդիկ ողջակէզ եղեր և այլք վիրաւորուեր են։ Անպատսպար մընացեր են իբր 3000 հոգի։

= Եգիպտոսէ գրուած է թէ Թանթահի բանտին մէջ համաճարակ ծանր հիւանդութիւն մը ծագելով, 1100 բանտարկելոց 200ը մեռան։

= Ըստ վերջին տեղեկութեանց՝ հանդարտ չնստիր Սպանիոյ գահուն թեկնածու Տոն Քարլոս։ Քարլոսեանք մօտերս կը ժողովին ի Պելճիա՝ աղդու ընթացք մը բռնելու համար։ Իշխանութիւնք չարունակ երևան կը հանեն և կը գրաւեն Քարլոսեանց յատկացեալ դէնք ու հրանիւթ։

= Շուենստանի կառավարութիւնը քննութիւն բացած է՝ սահմանադիւի կազմոց մէջ բաղումհետևլեն զըրաց գերի լինելուն պատճառն ի վեր հանելու համար։ Քանի մը սպայք բանտարկեալ են իբր կասկածելիք։

= Իրլանտիոյ հռոմէական կղերն սկսած է շնորհակալեաց ուղերձներ մատուցանել առ Պ. Կլատսթոն՝ ինքնօրինութեան խընդրոյն համար, և ըստ արժանւոյն ունկն չդներ Վատիկանի՝ որ կը յորդորէ զգուշանալ քաղաքական ու կուսակցական խնդիրներէ։

= Սերպիոյ վաճառականաց կողմանէ պատգամաւորութիւն մը Բեդրսպուրգ կերթայ, որպէս զի բանակցի ընդ մէջ Սերպիոյ և Ռուսիոյ առևտրական ուղղակի յարաբերութիւն հաստատելու համար։

= Պավիէրայի Լուի Բ. թագաւորին կենաց ու մահուան վրայ զանազան տեղեկութիւնք կը հասնին։ 41 տարեկան էր և 22 տարիէ հետէ կը թագաւորէր։ Շատ գեղեցիկ և հսկայական կազմուածք ուներ. կատէր կիներէն. մեծ զգուշութիւն կընէր որ չհանդիպի կանանց։ Մայրաքաղաքին բնակչաց ստորին դասուն և դիւղացւոց մէջ ընդհանուր համոզում կայ թէ խելագար չէր նա և թշնամութեամբ գահակիրկ ըրին։ Դահակրկութենէն երկու օր ետքը, իր բժշկին (Կուտարն) հետ Սդայնպերկի լճին եղերքը չըկագայել երևելով, պատուիրեր է որ սպասաւոր չդայ լրենց ետևէն. լճին մօտ հասնելուն պէս, գլխարկն ու վերարկուն մէկ կողմ դրեր և լիճը նետուեր է. բժիշկը աչխատեր է աղատել, բայց թագաւորը կորովի և բժիշկը ծեր լինելով՝ վերջինն յաղթուեր և երկուքն ալ գնացեր մնացեր են յըրոյն խորը։ Ծանօթութիւն կը տըրուի թէ Լուի Բ. թէև ըստ կարի մեկուսացեալ կապրէր, թէև կանանց սէրը կամ ո՛րևէ ֆիզիքական կիրք բնաւ տեղի չունէին իւր բըՆուէթեան մէջ, բայց քալ տեղեակ էր եւրոպիոյ ամեն գրական ու գեղարուեստական եղելութեանց, իւր դեսպանք իրենց ժամանակին մեծ մասը կանցուներին՝ լուսանկարներ, գծագրութիւններ և չտեսած տեղերուն ու դիրքերուն պատկերները ձեռք բերելով և առ ինքն ղրկելով ըստ հրահանգին։ Կը կարդար չատ մը լրագրեր, և իրեն անծանօթ լեզուօք հրատարակեալ լրագրաց խմբագրականներն հասառօտել կուտար Թիւինապահց ու քարտուղարաց՝ որ իրեն կը հետևէին ամենուրեք։ Դահաղիրկ լինելով Պերկի դղեակը փոխադրուած տեղն ըսեր է թէ կրնամ հանդուրժել որ կառավարութիւնը ձեռքէս առնուն, բայց ոչ ևս կըրնամ ապրիլ քանի որ խելագար կը հռչակեն զիս։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

×× Հնդիկ եչխանաց պոլոպանները։ — Երբ մարդ կարդայ տիրղոսաց կարդը, զարմ կը կրեն եւրոպացի իշխանք, կը զարմանայ տեսնելով արժանեաց հոյլ մը ժողովեալ մէկ անձի վրայ. բայց ի՞նչ են այն մեծ տիրղոսները, որք կան եւրոպացի զօրաւորագոյն վեհապետաց վրայ, համեմատութեամբ այնոցիկ զոր կը կրեն հնդիկ իշխանք։ Կօթայի տաբեցուցին ամբողջ էջերն չեն բաւեր պարզ իշխանի մը արժանեաց համար յատկացեալ տիտղոսներու հրատարակութեան։ Աչխին արքայն ի Սումադրա, զոր Հոլանտացիք երկար ատենէ ի վեր գրաւած են զինու զօրութեամբ, յոյժ բազմազան մասնաւորութիւններ ունի, որոց միքանին կընչանակեմք աստ։ Այդ արքային ինքզինքը կանուանէ, բառական թարգմանութեամբ, «Որքայ ամենայն աչխարհի. մարմինը կը ցոլայ իբրև միջօրէի արևու ճառագայթ. նա է ամենայն արքայից արքայ, որոյ առջև խոնարհին թագաւորք ամենայն և հնազանդին հրամանաց։ Նորին հնդկան վեհապետութիւնը կըոր դընտակի մը պէս մտացի է և ծովու պէս երանաւէտ. այսու ամենայնիւ դերին է Աստուծոյ որ կը տեսնէ զնա. կրնայ տեղեկանալ մարդկան մեղաց և կրնայ արձակումք տալ։ Նա է աչխարհի օգտակար թագաւորն, որոյ ոտներն անոյշ կը հոտին և որոյ բոլոն աչխարհի ամէն թագաւորաց վրայ կը տարածուի, և կը չրջապատէ զնոսա։ Աչերը կը փայլին իբրև արուսեակ այգուն։» Բայց ասկէց զատ նաև տէր է նա զօրաւոր առումներով վիղերու, և ստացիչ կարմիր, սև, սպիտակ, երկնագոյն և ամուլ փիղերու, որ ամենակարողէն զարդարեալ են ադամանդեայ ծածկոյով մը։ Աստուած նախասահմանած է զինչխանն հրամայել ամենայնի, բայց՝ կերևի թէ Հոլանտացիք չեն ուզած յարդել այդ նախասահմանութիւն։ Սիամի արքայն ևս վեհապետ է ամենայն աչխարհի, և Աստուծոյ պէս միակ կայսր մ'է. նա կը փայլի որպէս լուսին, կը ցոլայ նման արուսեկի. տէր է միայն սպիտակ փիղերու, որք ունին կարմիր և կլոր պոչ. հանճարեղ է Աչխին արքային պէս. սա ևս Թոյլ կուտայ արևու երկնել, կամ ջուրց սահիլ. այս ամենն ըստ իւր կամաց։ Նա ունի 140 ատամամբք սուրմի, որ մեծ թշնամւոյն խողխողման համար սահմանեալ է. ունի նաև ադամանդով լի պարկ մը։ Տէր է այն թուղթին՝ որ աչխարհի ստեղծմանէն ի վեր կայ. Սուլթան է վառ ճրագին և ոսկեայ գետոյն. նա կը տիրապետէ ի վերայ օդոյ և ամպոց. տէր է գոմէշին որոյ եղջիւրներն 12 ոտք իրարմէ հեռու կան։ Եւրոպացի ո՛ր իշխանն կամ վեհապետն ունի այչափ տիտղոս, ստորոգելիք և զօրութիւն։

×× Քան պոէտ վէբ ունի ծածկոյ ենթակ մը։ — Ի Վիէննա Բրոֆէսէոր Ալպերդի խնամոյ յանձնեալ Քլինիքի մէջ անցեալ ամսոյ 22ին վիրաբուժական յոյժ հաղուագիւտ գործողութիւն մը կատարուած է։ Զինուոր մը, որ 1866ի պատերազմին մէջ այտէն վիրաւորուելով գերբի բռնուած և ի Պերլին հիւանդանոց փոխադրուած էր, արձակեցաւ զինի խաղաղութեան։ Վերքը բժշկուած էր հիւանդանոցին մէջ սակայն գնտակն՝ որ այտէն մտնելով լորձնային գեղձերուն մէջ սառած էր, դուրս չէր եկած։ Այժմ, քսան տարի ետքը, յիշեալ բժշկին ձեռամբ դուրս հանուած է գընտակը. գործողութիւնն յաջողած է անշուսս և հիւանդը լաւ վիճակի մէջ է։

×× Զրաքաչխան Ղրիմեայ խոչվէտ։ — Երկաթուղեայ վրայ բանող կառաց անիւներն ու երկաթները թուղթէ չինելու գիւտն արդէն յայտնի է։ Այժմ Վիէննայի մէջ յաջողած են ջրաքաչխ խողովակները թուղթէ չինել։

×× Անգղեց զօրաց ձիերու արձել ինելը մինչեւ ցարդ ոչ ոք, նոյն իսկ Անգղիոյ մէջ թերևս բազումք չգիտէին։ Այժմ բարձրագոյն հրամանաւ թոյլտուութիւն եղած է զօրաց ձիեր փողոցի մէջ, ձմեռն՝ ժամը 5 էն ետքը (միջօրէէն 5 ժամ վերջը) և ամառն ժամը 6էն ետքը։

×× Ազենաուան։ — Նաւթիւէն կը դրեն թէ բազում բժիշկք գարեջրատանց նման արենատուներ հաստատած են անդ, յորս հիւանդ անձինք, մանաւանդ կուրծքի հիւանդութիւն ունեցողք, իբրև անվրէպ դարման իրենց հիւանդութեանց, պիտի կարենան գտնել անանոյ թարմ արիւն։ Ճաճախորդք բազմաթիւ են։

×× Հին ոսմանեանք Ամերիկա։ — Յայտնի է թէ վերջին ժամանակներս հին ու մաշած կահույ և զգեստուց մասնաւոր արժէք կը տրուի արուեստագէտ-մասնագէտ ընկերութիւններէ։ Հին զգեստուց ցնցոտիներէն կը չինուի թուղթ. բրդեայ կապերտներու քուրչերէն և բրդէ հինցած գուլպաներէն կը պատրաստուի արուեստական բուրդ. բայց այս արուեստք այնչափ տարածեալ չեն այլուր քան Ամերիկա։ Վերջերս սկսած են հին ոտնամաններէն նորեր չինել։ Կօչիկները փոքր կտրատելով քըլորական ծծումբի մէջ կը դնեն և 24 ժամ կը թողուն անդ. չորնալէն ետքը այդ կտորներն յոյժ կը կարծրանան. ապա ջրոյ մէջ լուալով վերստին կը չորցունեն, և յետոյ կը փոշիացունեն և տեսակ մը դիւրագին մածուցիկ նիւթով խառնելով խմոր մը կը չինեն. այդ խմորէն կը պատրաստեն սանտր, կոճակ, դանակի կոթեր և այլ ամէն տեսակ գործիքներ, որք գեղեցիկ ապնիակի կը նմանին և ունին նոյնա ամրութիւնը։

×× Զաքմանալի էջաս մը։ — Միւնիխի պանդոկներէն միոյն մէջ մէկ միլիոն նամակադրոշմի բարձրութեան վրայ գրաւ մը բռնուեցաւ։ Մին կը պնդէր թէ երբ մէկ միլիոն նամակադրոշմք իրարու վրայ դրուին, բարձրութիւնը կը հասնի Միւնիխի գլխաւոր աչտարակի բարձրութեան։ Ա՛յս խնդիրը շուտով և պարզօրէն լուծուեցաւ։ 30 դրոշմ իրարու փակցուելով մէկ տասնորդագիծ (երկրաչափական) բարձրութիւն ունեցաւ։ Հետևաբար 300 դրոշմը մէկ տասնորդատասհատ, 3000ը մէկ տասնորդատասն, 30,000ը հաւասար 10 ոտ.քի, 300,000ը 100 ոտ.քի, և 900,000ը ճիշդ 300 ոտ.ք բարձրութեան, որ է աչտարակին բարձրութիւնն։ Հետևաբար չահեցաւ այս կարծիքն ունեցողը։

×× Գլեվ լենդէ հրաւիրեր։ — Մանուշիկը թէ Միացեալ Նահանգաց նախագահին ամուսնութիւնն ընդ օրիորդ Ֆօլսըմի կատարուեցաւ յոյժ պարզութեամբ, իբր յօրինակ աչխարհի։ Դահլճի անդամք սա հետևեալ հրաւիրագրն ընդունած են հարսանեաց օրէն 3 օր յառաջ։ — «Սիրելի՛դ իմ Ֆ... յառաջիկայ չորեքչաբթի Սպիտակ Տան մէջ պիտի ամուսնանամ օրիորդ Ֆօլսըմի հետ. յոյժ պարզ պիտի լինի. յանչափս երախտապարտ պիտի մնամ ձեզ, եթէ այս առթիւ պատուէրք զիս ձեր ներկայութեամբ։ — Ձեր անկեղծ բարեկամն, Կրօվըր Քլիվլենտ։» Հրաւիրելոց թիւն եղած է 25։ Նախագահն յետ հարսանեաց ընդունած է դեսպաններն և զայլս։

ԱՆԱՊՆԱԲՈՑԾ ՄԻՆԱՄ ԷՄԻՐԵԱՆ

Ձիերու, կովերու և չանց հիւանդութիւնները կը դարմանէ և առ ու ծախի ատեն նոյն կենդանեաց առողջ կամ հիւանդոտ լինելն հասկնալ ուզողները կը գոհացընէ։ Պէտք է դիմել Պօլիս Պահճէ–Դարու Մէրհամէթեան էֆէնտիի դեղարանը, կամ իւր բնակարանը Իւսկիւտար Պաղլարպաչի Ամա–պէյ փողոց թիւ 24։

Էրդոյէ Խոչոռ։ — Այս անունով վիպասանութիւն մը հրատարակիլ սկսած է Հայաստան և Թրքաբարբառ։ Ամեն ամիս 8 երեսէ բաղկացեալ 16 թերթեր պիտի հրատարակուին։ 16 թերթի բաժանորդագինն է Պօլսոյ համար՝ 5, իսկ գաւառաց համար 6 ղրուչ։ Գաւառներէն բաժանորդագնոյ փոխարէն կընդունուի դրոշմաթուղթ ալ։ Մէն մի թերթի գինն է 20 փարայ։ Բաժանորդագրութեան տեղն է Պօլիս Զագմագճլար փողոց Ճակոբեան Խան Թ. 11, Պաղտատլեան տպարանը։ Լրագրավաճառաց միջոցաւ ալ բաժանորդ կընդունուի։

ՈՐԴԱԿՈՑՈՐ ԴԵՂԸ

Փայտոջիլ, լու, ոջիլ, ճանճ, մժեղ, մրջուն, թրթուր և այլայսպիսի որդեր ու ճճիները կոտորող ջրաւոր դեղ մ'է։ Մէկ քիլօյի գինն է 12 ֆրանք։ Թղթատարութեան միջոցաւ՝ 100 կրամը 1 ֆրանք 95 սանթիմ։ Ի Լիոն Դուբ տ'Էրպուվիլ, Լ. Կալլի. Թ. 71։ Թուրքիոյ համար Ղալաթիոյ մեծ փողոցը 35 թիւ դեղարանն է Մեթրալայը։ Ի Դահիրէ Պ. Բէրջոյի վաճառատունն, ի հրապարակի թըղթատարութեան։ 2–10

ԲԱՌԱՐԱՆ
Օսմանեան լեզուէ
Աչխատասիրեաց Միհրան Ե. ֆէնտի Աբիկեան. հրատարակուեցաւ եօթներորդ տեսրն ալ։
Գինն՝ 60 փարայ։

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՎԻ
ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ

Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեան գրած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, եւ Աղթամարայ ու Սսոյ կաթուղիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան եւ պարտուց ու պաշտաման վրայ, պատմութեամբք՝ արձանագրութեամբք եւ հին ու նոր վաւերական պաչտօնագրովք հաստատեալ զամենայն։ Ընթերցողն լիուլի ծանօթութիւն կստանայ Հայաստանեայց Հայրապետութեան եւ Աղթամարայ ու Սսոյ անցեալ եւ ժամանակակից վիճակայ վրայ։ Աչխուժ եմք, թէ մեծ կարեւորութիւն ու օգտակարութիւն ունի այս հրատարակութիւնը, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում Սսոյ կաթուղիկոսական խնդիրն կը յուզուի դեռ եւ Պալաժենիայի բարեփոխութեան վրայ կխօսուի։ Գեր. Իզմիրլեան քալ հետազօտած ու խմաստասիրած է զայս ամենայն, եւ լուսաւոր ծանօթութիւններ կընծայէ հեռաքնին Հայոց։ Գրքին սկիզբը դրուած ցանկը աչքէ անցուսողն պիտի տեսնէ, թէ ո՛րչափ նչանաւոր անցքեր նչանակեալ են խնամով, եւ քանի՛ նըշանաւոր ու մեծարելի է Հայկակ անհատութեանց միակ մնացորդն եղող Հայրապետութիւնն։ Կարժէ, որ ամեն Հայ ունենայ հատ մը. կարժէ որ ամեն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կազմուի լրագրոյս Գրասենեակը, Պօլիս Պալըդ–բազար Նաֆիյէ–խան վերի յարկ թիւ 16. Պաղչէ–գաբու Զըբավաճառ Պօղոս աղայի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսներէ։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՈՒԿ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լկարդի, ստամոքսի եւ աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, ամեն ջղային տկարութեան ուժաթափութեան եւ տխրութեան համար. կը ջնջէ եւ անհետ կընչէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի եւ երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ եւ գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ որովայնի մէջ լցուած կազեր, գլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կչափաւորի, եւ մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց ընկերակցաճառ կըլլան, առողջ ու ժեղ եւ բնական դիրքը կդգենու։

ONCUENT HOLLOWEY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն եւ վերք բուժելոս մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւասարիր բընաւ ուրիչ դեղ մը։ Հին կամնոր թուլատոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չէրչէնէլ), սրունկէ եւ ստեհնց վերքեր կամ բոլորովին կանցնին եւ կամ կչաւանան. օգտակար է նաեւ հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իր կազդուրիչ եւ զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (պըռճաճ) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը լինչ աստիճան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նչանակուած է իւրաքանչիւր տփի վրայ, որ կգտնուի ամեն դեղավաճառներու քով, եւ մանաւորապէս Պաղչէ–գաբու Թաշ–խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, թիւ 7, կը կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ ճեղինակն ոսքթօր Հոլլօուէյ ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԻՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ
Բիզա–փաչա խան թիւ 3